ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***24.01.2019թ. ժամը 11.00***

Նախագահում էր Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 57 անդամներից 50-ը:

Մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալներ Նարեկ Գրիգորյանը, Անուշավան Ղազարյանը, մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը, մարզպետի խորհրդական Արտաշես Նիկոյանը, մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալբերտ Աղեկյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները:

Մասնակցում էին նաև ջրային կոմիտեի նախագահի տեղակալ Ֆրանց Հակոբյանը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ու զարգացման նախարարի օգնական Հարություն Գուլյանը և Գեղարքունիքի ՋՕԸ ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի մարզի» համաժողովի կազմակերպման և անցկացման մասին:

/Զեկ. Վարդուհի Մնացականյան - մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2018 թվականի համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների և 2019 թվականի համայնքային բյուջեների մասին:

/Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2018 թվականին իրականացված աղբահանության վարձավճարների հավաքագրման արդյունքների և 2019 թվականին իրականացվող աղբահանության գործընթացի մասին:

/Զեկ. Վանիկ Հարությունյան – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

4. Այլ հարցեր:

Ելույթներ ունեցան՝

Կարո Գևորգյանը	- Ներքին Գետաշեն համայնքի ղեկավար
Արման Ղազարյանը	- Զոլաքար համայնքի ղեկավար
Հակոբ Ավետյանը	- Գեղամասար համայնքի ղեկավար
Լևիկ Գրիգորյանը	- Ձորագյուղ համայնքի ղեկավար
Սուլիկո Շուշանյանը	- Շողակաթ համայնքի ղեկավար
Հարություն Գուլյանը	- տարածքային կառավարման և զարգացման նախարարի օգնական
Ֆրանց Հակոբյանը	- ջրային կոմիտեի նախագահի տեղակալ
Հայկ Սողոյանը	- «Գեղարքունիք » ՋՕԸ տնօրենի պաշտոնակատար

Հայտարարություններով հանդես եկան՝

Յուրա Մուշեղյանը	- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ
Համբարձում Համբարձումյանը	- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտնտեսության և բնապահպանության վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Գնել Սանոսյանը:

1. Առաջարկվեց մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2018 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ ու աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ.

2) մինչև 2019 թվականի հունվարի վերջ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել հաստատված 2019 թվականի համայնքային բյուջեները.

3) խիստ կարևորելով համայնքների աղբահանությունն, ակտիվ աշխատանքներ տանել ազգաբնակչության հետ աղբահանության վարձավճարները հավաքագրելու և համայնքների աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար.

4) համայնքի ավագանու նիստերը հրավիրել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.

5) 2019 թվականի ապրիլի 19-ին նախատեսվող «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի մարզի» համաժողովին նախապատրաստվելու համար ուսումնասիրել և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել համայնքներում ներդրումային ծրագրեր իրականացնելու համար առկա հնարավորությունները՝ գործիքակազմը, մասնագետների առկայությունը.

6) կապեր հաստատել համայնքների գործարարների հետ և բանակցություններ վարել նրանց հետ՝ համայնքներում ներդրումներ անելու և ծրագրեր իրականացնելու համար.

7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել ծնունդով համայնքներից գործարարների ցուցակը, ովքեր պատրաստ են երկխոսության և համայնքներում ներդրումների.

8) ակտիվորեն համագործակցել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության հետ՝ սուբվենցիոն ծրագրային հայտեր ներկայացնելու համար.

9) համայնքներում վարձակալությամբ տրված հողերը մշակող շահառուներին տեղեկացնել՝ վարձավճարները և առկա պարտքերը չվճարելու դեպքում կսկսվեն կնքված պայմանագրերի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելու և դատական կարգով ապառքները գանձելու գործընթացը.

10) պետական մարմիններից ստացված գրություններին ու քաղաքացիների դիմումներին պատասխանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում և բացառել դրանց ուշացումով պատասխանելը կամ չպատասխանելը.

11) ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել համայանքապետարանների աշխատակազմերի աշխատողների կարգապահությունը և բացառել աշխատանքային կարգապահական ներքին կանոնների պահանջների խախտումները.

12) վեր հանել համայնքներում առկա խնդիրները և անհրաժեշտության դեպքում դրանք քննարկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հետ.

13) համայնքապետարանների աշխատակազմերում կադրային քաղաքականությունն իրականացնել ելնելով մասնագիտական գիտելիքներից և աշխատանքային փորձառությունից.

14) աշխատել բաց և թափանցիկ, կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն տեղադրել համայնքների կայք էջերում, բնակիչների հետ քննարկել նրանց կողմից բարձրացված խնդիրներն ու առաջարկությունները և հնարավորության սահմաններում դրանց լուծումներ տալ.

15) ուշադրության կենտրոնում պահել համայնքների դպրոցների ջեռուցման գործընթացը և խնդիրների առկայության դեպքում համագործակցել մարզպետարանի հետ՝ դրանց լուծումներ տալու համար.

16) Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ աշխատանքներ տանել համայնքների ջրօգտագործողների հետ՝ կուտակված պարտքերն առաջիկա 20 օրվա ընթացքում մարելու համար.

17) ոռոգման սեզոնին նախապատրաստվելու համար կազմակերպել և իրականացնել համայնքների ոռոգման ջրատարներն աղբից մաքրելու աշխատանքները:

2. **Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Համբարձում Համբարձումյանին՝** ամենօրյա աշխատանքներ տանել մարզի համայնքների ղեկավարների հետ.

1) ջրօգտագործողների կողմից կուտակված պարտքերը մարելու գործընթացը սահմանված ժամկետում ավարտին հասցնելու համար.

2) համայնքների ոռոգման ջրատարներն աղբից մաքրելու աշխատանքները ժամանակին կազմակերպելու և իրականացնելու համար:

ՄԱՐԶՊԵՏ՝

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ